ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» 06 2016 թվական N: 244-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի զինվորական կոմիսարի 2016 թվականի հունիսի 14-ի թիվ 2/266 գրությունը՝

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2016 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» N 165-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշմամբ հաստատված N1 հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «Գագիկ Թադևոսյան» բառերը փոխարինել «Լենա Ճաղարյան» բառերով.

2) որոշմամբ հաստատված N2 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «Գագիկ Թադևոսյան- վիրաբույժ (ավագ բժիշկ)» բառերը փոխարինել «Կոնստանտին Մուսինյան- վիրաբույժ» բառերով.

3) որոշմամբ հաստատված N2 հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետի «թերապևտ» բառից հետո լրացնել «(ավագ բժիշկ)» բառերը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է